ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

# ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԹԻՎ 3, ՄԱՐՏ, 2000 Թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

1999 թվականի դեկտեմբերին Հայաստանում եւ Վրաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության երեւանյան գրասենյակը նախաձեռնել է հաղորդագիր-հոդվածների մի շարք: Վերջինիս նպատակն է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ծանոթացնել համաեվրոպական կառույցների հետ, ինչպես նաեւ պարբերաբար տեղեկացնել հանրությանը Եվրոպական միություն-Հայաստան հարաբերությունների զարգացման գործընթացի մասին: Այս շարքին պատկանող անդրանիկ հաղորդագիրը՝ «Հայաստանը եւ Եվրոպական միությունը՝ երկարաժամկետ գործընկերներ» խորագրով, լույս տեսավ 1999 թ. դեկտեմբերի 10-ին «Հայաստանի Հանրապետություն» թերթում: Հրապարակման մեջ համառոտ ներկայացվել էին Հայաստանի եւ Եվրամիության հարաբերությունների հիմնադրույթները, ինչպես նաեւ երկկողմանի ծրագրերի հակիրճ բնութագիրը: Երկրորդ հաղորդագրի («Հայաստանի Հանրապետություն», 22 հունվարի, 2000 թ.) նպատակն էր ավելի մանրամասն տեղեկություններ տրամադրել Եվրամիության, նրա հիմնական կառույցների եւ Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացման վերաբերյալ: Այս հաղորդագիրը տեղեկացնում է ԵՄ-Հայաստան համագործակցության սույն թվականի մարտի 14-ին Բրյուսելում կայացած համաժողովի արդյունքների, Պարենի ապահովության ծրագրի գործունեության, եվրո արժութադրամի ներդրման եւ ԵՄ-Հայաստան համագործակցության զարգացման մասին:






Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության երեւանյան գրասենյակը շնորհակալ կլինի հաղորդագրի վերաբերյալ Ձեր դիտողությունների եւ առաջարկությունների համար, որոնք կարող եք ներկայացնել ec@infocom.am էլեկտրոնային փոստի հասցեով, կամ անմիջականորեն գրասենյակ՝ Մաշտոցի 13 հասցեով:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

# ԵՄ - ՀՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.
## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտի 30-ից ապրիլի 2-ը պաշտոնական այցով Երեւանում էր գտնվում Հայաստանում եւ Վրաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար, դեսպան Ելիո Ջերմանոն: Նա ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հավատարմագրերը հանձնել էր 1999 թվականի նոյեմբերի 26-ին: Պարոն Ջերմանոն հանդիպումներ է ունեցել մի շարք պաշտոնատար անձանց հետ:

Մասնավորապես ՀՀ տրանսպորտի եւ հեռահաղորդակցման նախարարի հետ քննարկվել է TRACECA ծրագրի շրջանակներում մայիսին կայանալիք Կարմիր Բլուրի երկաթուղային բեռնաթափման կայանի պաշտոնական բացման արարողության կազմակերպումը: Նշված բեռնաթափման կայանի ամբողջական վերանորոգումն ու վերակահավորումը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից, իսկ անմիջական աշխատանքները իրականացվել են ԵՀ Tacis անհատույց տեխնիկական օգնության ծրագրի միջոցով:

Պարոն Ջերմանոն նախարարին տեղեկացրեց, որ ՀՀ վարչապետի կողմից ստորագրված Երեւան եւ Թբիլիսի օպտիկական մալուխի տրամադրմանը վերաբերող ֆինանսական հուշագիրը արդեն իսկ ստորագրվել է նաեւ Եվրոպական հանձնաժողովի անդամ պարոն Փաթենի կողմից, եւ համապատասխան կազմակերպչական միջոցառումներից հետո կսկսվի ծրագրի անմիջական իրականացումը: Դեսպանը նշեց, որ ամենայն հավանականությամբ ծրագիրը սկիզբ կառնի ապրիլի ընթացքում, իսկ ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր աշխատանքները պետք է ավարտվեն 2 տարվա ընթացքում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի հետ պրն. Ջերմանոն քննարկեց պարենի ապահովության ծրագրի արդյունքները եւ ապագա աշխատանքների իրականացման ուղիները:

Դեսպանն իր գոհունակությունը հայտնեց համատեղ ծրագրերի իրականացման գործընթացի վերաբերյալ եւ հավաստիացրեց, որ իր այցելությունները ավելի հաճախակի կլինեն:

---

Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության երեւանյան գրասենյակը տեղեկացնում է, որ մայիսի 9-ին Երեւանում կայանալիք եվրոպական ֆիլմերի շաբաթի նախապատրաստումը հաջող է ընթանում: Ֆիլմերի շաբաթը անց է կացվելու Երեւանի կինոյի տանը: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է ցուցադրել այնպիսի հայտնի եվրոպական ֆիլմեր, ինչպիսիք են` «Այսպիսի կյանք» (Քոլին Նութլի, Շվեդիա), «Կայծակի պես» (Միգել Հերմոսո, Իսպանիա), «Անանուխ» (Հունաստան), «Քայլող թռչուն (Zugvogel)» (Գերմանիա), «Սերիական սիրեկաններ», «Միայն աստված է ինձ տեսնում», «Միկրոտիեզերքը» կամ «Կանաչ աշխարհի ժողովուրդը» (Ֆրանսիա) եւ այլն:

---

Ըստ պաշտոնական տեղեկությունների ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանի սույն թվականի մարտի 21-ի թիվ 115 որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում եվրոպական հանձնաժողովի տեխնիկական օգնության Tacis ծրագրի ազգային համակարգող է նշանակվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար պրն. Լեւոն Բարխուդարյանը:

Պարոն Բարխուդարյանը վաղուց ի վեր համագործակցել է եվրահանձնաժողովի ծրագրերի հետ, մասնավորապես նա իր անմիջական մասնակցությունն է ցուցաբերել պարենի ապահովության ծրագրի աշխատանքներին, քաջատեղյակ է Tacis-ի այնպիսի ծրագրերին, ինչպիսիք են «Գյուղացիական փոխօգնության բանկի հիմնադրում», «ԵՄ-Հայաստան Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի իրականացման ոլորտում քաղաքական եւ իրավական խորհրդատվության կենտրոն» (AEPLAC) եւ այլն: Պարոն Բարխուդարյանի նշանակումն, անկասկած, կնպաստի Հայաստանում եվրոպական հանձնաժողովի տեխնիկական ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

---

Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության երեւանյան գրասենյակից հայտնում են, որ ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանը «ԵՄ եւ Հայաստան Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի իրականացման ոլորտում քաղաքական եւ իրավական խորհրդատվության կենտրոն» (AEPLAC) ծրագրի ընդունող կողմ է նշանակվել ՀՀ առեւտրի եւ արդյունաբերության նախարարությունը: Կառուցվածքային տեսակետից այս որոշումը մեծագույնս կնպաստի համաձայնագրի իրականացմանը: Նշված խորհրդատվության կենտրոնը, որ տեղակայված է ՀՀ առեւտրի եւ արդյունաբերության նախարարությունում, կոչված է խորհրդատվություն տրամադրել տարբեր նախարարություններին Գործընկերության եւ համագործակցության պայմանագրի դրույթների կիրառման վերաբերյալ: Ի լրումն վերը նշվածի, այն նաեւ օժանդակելու է Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովներին նոր օրենքներ մշակելիս, որպեսզի դրանք լիովին համապատասխանեն ԵՄ չափանիշներին:

Առեւտրի եւ արդյունաբերության նախարարությունը համակարգելու է նաեւ տարեկան գումարվող Հայաստան եւ Եվրոպական միություն համագործակցության կոմիտեի աշխատանքները, իսկ համագործակցության խորհրդի շրջանակներում Հայաստանը ներկայացված է լինելու հանձինս խորհրդի համանախագահ եւ ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի:

Միեւնույն ժամանակ, ծրագրի արդյունավետությունը ապահովելու համար կարեւորվում է նաեւ համագործակցությունը միջգերատեսչական հանձնաժողովի հետ:

---

Եվրոպական հանձնաժողովի Tacis անհատույց տեխնիկական օգնության ծրագրի շրջանակներում 2000 թվականին Հայաստանում սկսվել են իրականացվել ազգային հետեւյալ նոր ծրագրերը.

- Օժանդակություն ետսեփականաշնորհման գործընթացին եւ մասնավոր սեկտորին,
- Օժանդակություն զբաղվածության քաղաքականության ոլորտում,
- Հայաստանի իրավական համակարգի զարգացում
- Մարզերի զարգացում (Լոռու մարզի օրինակով)

Եվս մեկ ծրագիր` «Օժանդակություն պետական ծառայության բարեփոխումների գործընթացին», նախատեսվում է սկսել փոքր ինչ ավելի ուշ: Դեռեւս ընթացքում են նաեւ նախկինում սկիզբ առած «Քաղաքական եւ իրավական խորհրդատվություն ԵՄ եւ Հայաստան Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի իրականացման ոլորտում» (AEPLAC) եւ «Միջազգային հաշվապահական կենտրոն» ծրագրերը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

# ԵՎՐՈՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺՈՒԹԱԴՐԱՄԸ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ




Եվրոն, որպես համընդհանուր արժութադրամ ներկայացվել է բանկերին 1999 թ. հունվարի 1-ին: Ներկայումս ՀՀ որոշ բանկեր նույնպես բանկային հաշիվների ծառայություններ են տրամադրում եվրո արժույթով: 2002 թվականի հունվարի 1-ին նախատեսվում է շրջանառության մեջ դնել եվրո թղթադրամները եւ մետաղադրամները: Վերջիններիս արտաքին տեսքը նախօրոք պաշտոնապես ներկայացվել է Ամստերդամում կայացած Եվրոպական խորհրդի նիստում:

2002 թվականի հունվարի 1-ին եվրոն կփոխարինի համընդհանուր արժութադրամային համակարգին միացող ԵՄ անդամ երկրների ազգային արժութադրամներին: Առայժմ եվրոպացի հաճախորդներին եվրոյին ընտելացնելու նպատակով բոլոր ապրանքների գնապիտակները ներկայացվում են ինչպես ազգային արժութադրամով, այնպես եւ եվրոյով:

Երեք ԵՄ անդամ երկիր՝ Միացյալ Թագավորությունը, Դանիան եւ Շվեդիան իրենց իրավունքն են վերապահել չմիանալու եվրոյի ներդրման վերջնական փուլին կամ միանալու ավելի ուշ:

Համընդհանուր արժութադրամի ներմուծումը Եվրոպական միության անդամ երկրների համար ինտեգրացման կարեւորագույն նախաձեռնություններից է եւ անմիջական ազդեցություն է ունենալու միացյալ Եվրոպայի յուրաքանչյուր քաղաքացու համար:

# Արդյոք Հայաստանը կանդամակցի՞ Եվրոպական խորհրդին

Մամուլի որոշ հրապարակումներում, քաղաքական քննարկումների ընթացքում, նույնիսկ որոշ պաշտոնատար անձանց հայտարարություններում երբեմն շփոթում են «Եվրոպայի խորհուրդ» եւ «Եվրոպական խորհուրդ» անվանումները: Այս առումով Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության երեւանյան գրասենյակը հարկ է համարում պարզաբանում տալ այդ երկու կառույցների տարբերության վերաբերյալ:

Եվրոպական խորհուրդը առանձին կազմակերպություն չէ, այլ 15 պետություններից կազմված Եվրոպական միության կառավարման մարմիններից է: Այն կազմված է անդամ երկրների կամ նրանց կառավարությունների 15 ղեկավարներից, որոնք հանդիպում են տարեկան երկու անգամ՝ ԵՄ առաջնությունները որոշելու եւ քաղաքական ուղիները ուրվագծելու համար: Նախագահությունը կիսամյակը մեկ անցնում է մեկ անդամ երկրից մյուսին: Օրինակ, ներկա նախագահող երկիրը Պորտուգալիան է, որի նախագահության ժամկետը լրանում է 2000 թ. հունիսի մեկին: Դրանից հետո նախագահությունը կանցնի Ֆրանսիային:

Ի տարբերություն վերը նշվածի, Եվրոպայի խորհուրդը Եվրոպական միության կառույցներից չէ: Այն Ստրասբուրգում տեղակայված անկախ միջազգային կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է ամրապնդել առաջնահերթությունները, զորեղացնել ժողովրդավարությունը, մարդու իրավունքները եւ օրենքի գերիշխումը կազմակերպության անդամ երկրներում: Ներկայումս եվրոպական երկրների անդամ է 41 երկիր:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանը ներկայումս գտնվում է Եվրոպայի խորհրդին անդամակցելու գործընթացում, այնինչ Եվրոպական խորհրդին Հայաստանը կարող է միանալ միայն Եվրոպական միությանը անդամակցելու արդյունքում:



**1999 թվականի նոյեմբերի 1-ից Երեւանում գործում է Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության երեւանյան գրասենյակը:**

*Գրասենյակի հասցեն է՝ ք. Երեւան, Մաշտոցի պողոտա 13*
*Հեռախոս՝ (3742) 53.02.41*
*Ֆաքս՝ (3742) 53.39.24*
*Էլեկտրոնային փոստ՝ ec@infocom.am*

Գրասենյակում գործում է մշտական աշխատակազմ, որն իրականացնում է Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության համագործակցության բոլոր նախագծերի համակարգումը:

